Հեռ. +374 60 27 88 88,
Չարենցի փող. 1, գր. 207,
0025, Երևան, ՀՀ

Տեղեկանք

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերի վերաբերյալ

*Տվյալները ներկայացված են 08.04.2020 թ.-ի դրությամբ

	Ում է հետաքրքիր	Հակիրճ նկարագրությունը	Հղումը Իրավական ակտին
Միջոցառում 1	Բոլոր տնտեսվարողներին	ՀՀ Տարածքում գործող բանկերից և վարկային կազմակերպություններից վարկերի համաֆինանսավորում, վերաֆինանսավորում կամ տոկոսի սուբսիդավորում:	Միջոցառում-ը Հաստատելու մասին որոշում, Կարգը հաստատելու մասին որոշում
Միջոցառում 2	Գյուղատնտեսության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը:	ՀՀ Տարածքում գործող բանկերից և վարկային կազմակերպություններից վարկերի համաֆինանսավորում կամ վարկի/լիզինգի սուբսիդավորում:	Միջոցառումը Հաստատելու մասին որոշում, Կարգը հաստատելու մասին որոշում
Միջոցառում 3	(i)Մշակող արդյունաբերության, (ii) կացության և հանրային սննդի կազմակերպման, փոխադրումների և պահեստայի տնտեսաության (iii) փոխադրումներ և պահեստային տնտեսության, (iv) զբոսաշրջային ծառայությունների (v) սպասարկման այլ ծառայություններ, (vi) առողջապահություն	ՀՀ Տարածքում գործող բանկերից և վարկային կազմակերպություններից վարկերի տրամադրում (տոկոսները՝ առաջին և երկրորդ տարիներում 0%, իսկ երրորդ տարում՝ 12%):	Միջոցառումը Հաստատելու մասին որոշում, Կարգը հաստատելու մասին որոշում
Միջոցառում 4	Ընտանիքները, որոնք ունեն մինչև 14 տարեկան երեխա, որոշակի հանգամանքների առկայության դեպքում:	Տրամադրվում է 100,000 ՀՀ դրամի չափով աջակցություն:	Միջոցառումը Հաստատելու մասին որոշում, Դիմումը կարելի է լրացնել այստեղ.
Միջոցառում 5	5-20 աշխատակից ունեցող տնտեսվարողները:	Տրամադրվում է միանվագ դրամաշնորհ, որը հաշվարկվում է հիմք	Միջոցառումը Հաստատելու մասին որոշում,

		ընդունելով աշխատակիցների քանակը և աշխատավարձերի հանրագումարը:	Կարգը հաստատելու մասին որոշում
Միջոցառում 6	Անձինք, ովքեր ազատվել են աշխատանքից Մարտի 13-30-ն ընկած ժամանակահատվածում:	Տրամադրվում է 100,000 ՀՀ դրամի չափով աջակցություն:	Միջոցառումը Հաստատելու մասին որոշում, Դիմումը կարելի է լրացնել այստեղ.
Միջոցառում 7	Հղի կանայք, ում ամուսինն ազատվել է աշխատանքից:	Տրամադրվում է 100,000 ՀՀ դրամի չափով աջակցություն:	Միջոցառումը Հաստատելու մասին որոշում, Կարգը դեռևս հաստատված չէ.
Միջոցառում 8	Հետևյալ ոլորտների վարձու աշխատողները (i) հյուրանոցային և հյուրատնային ծառայություններ, (ii) հանրային սննդի ծառայություններզբոսաշրջային ծառայություններ. 4) վարսավիրանոցների և գեղեցկության սրահների ծառայություններ. 5) մանրածախ առևտրի ծառայություններ, այդ թվում՝ առևտրի կենտրոնում կամ առևտրի իրականացման վայրում առք ու վաճառքի գործունեություն:	Տրամադրվում են միանվագ վճարներ, որոնք հաշվարկվում են աշխատավարձերի չափերին համապատասխան:	Միջոցառումը Հաստատելու մասին որոշում, Դիմումը կարելի է լրացնել այստեղ.
Միջոցառում 9	Ընտանիքները, որոնք ունեն մինչև 18 տարեկան երեխա և երեխայի ծնողներից ոչ մեկը կամ միայնակ ծնողը չի ունեցել գրանցված աշխատանք 2020 թ. մարտի 12-ի դրությամբ և չի ընդունվել ժամանակավոր կամ մշտական գրանցված աշխատանքի 2020 թ. մարտի 12-ից մինչև 2020 թ. մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում:	Տրամադրվում է 26,500 ՀՀ դրամի չափով միանվագ աջակցություն:	Միջոցառումը հաստատելու մասին որոշում: Հաստատելու մասին որոշում, Կարգը դեռևս հաստատված չէ.

1-ին միջոցառում

Ընդհանուր տեղեկություններ

Միջոցառումը շահառու են այն անձինք, ովքեր բավարարում են հետևյալ վավերապայմաններին.

1. Կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր[1], որոնք առևտրային գործունեություն են ծավալել վերջին մեկ տարվա ընթացքում,
2. Ունեն բարվոք հարկային և վարկային պատմություն:

Օժանդակությունը կարող է տրամադրվել հետևյալ ձևերով. (յուրաքանչյուր դեպքում կիրառելի է միայն մեկը).

- ✓ **Համաֆինանսավորում՝** (վարկի մի մասը տրամադրվում է պետության կողմից) մայր գումարի որոշակի չափով, վարկի նույն ժամկետով, համաֆինանսավորման մասի 0% տոկոսադրույքով, վարկի մայր գումարի վերադարձի մասով՝ մասնակի ռիսկի ստանձնում:
  Նշված լուծումը նպատակ է հետապնդում մասնակիորեն չեզոքացնել ապահովման միջոցի անբավարարության, արժութային ռիսկերի ինչպես նաև տոկոսների գծով մասնակի ծախսերի հետ կապված ռիսկերը:
- ✓ **Վերաֆինանսավորում՝** մայր գումարի որոշակի չափով (աշխատավարձերի և հարկերի վճարման դեպքում՝ ամբողջությամբ) վարկի նույն ժամկետով, 0% տոկոսադրույքով՝ առանց վարկի վերադարձի ռիսկի ստանձնման:
  Նշված լուծումը նպատակ է հետապնդում ամբողջովին չեզոքացնել վարկի գծով տնտեսավարողի մոտ արժութային ռիսկի, ինչպես նաև մասնակիորեն չեզոքացնել տոկոսների գծով ծախսերը:
- ✓ **Սուբսիդավորում՝** տվյալ վարկի տոկոսների որոշակի չափով սուբսիդավորում (աշխատավարձերի և հարկերի վճարման դեպքում՝ ամբողջությամբ, պայմանով որ փաստացի տոկոսը կկազմի 12%), վարկի ողջ ժամկետի համար՝ առանց վարկի վերադարձի ռիսկի ստանձնման:
  Նշված լուծումը նպատալ է հետապնդում էականորեն նվազեցնել տնտեսվարողի վարկային տոկոսների հետ կապված ծախսերը:

Միջոցառման նպատակով տրամադրվող վարկերը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

1. արժույթը՝ ՀՀ դրամ, համաֆինանսավորման գործիքի դեպքում ֆինանսական կազմակերպության կողմից տրամադրվելիք մասը կարող է լինել նաև արտարժույթով[2],
2. ժամկետը՝ մինչև 24 ամիս,
3. մեկ տնտեսավարողի՝ օժանդակության գործիքի ներքո տրամադրվելիք վարկերի առավելագույն գումարը՝ 500 մլն. ՀՀ դրամին համարժեք, և մեկ տնտեսավարողի

---

1 Բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատների և ապահովագրական ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետեր, արժեթղթերի առք ու վաճառքով զբաղվող կազմակերպություններ, ներդրումային կազմակերպություններ, ներդրումային ֆոնդեր, վիճակախաղերի և շահումով խաղերի կազմակերպիչներ և այլ նմանատիպ գործունեություն ծավալողները

[2]Նշված դեպքում էկոնոմիկայի նախարարությանը ներկայացվում է հավաստում առ այն, որ ընկերությունը ունի բավարար չափով արտարժույթով ներհոսքեր վարկը մարելու համար:

համաֆինանսավորման կամ վերաֆինանսավորման առավելագույն գումարի չափերը չեն կարող գերազանցել՝ 250 մլն. ՀՀ դրամը.

4. առավելագույն փաստացի տոկոսադրույքը 0%-ից մինչև 6% տարեկան (6%-ից ոչ ավել)՝ կախված կիրառվող օժանդակության գործիքի համար սույն միջոցառմամբ սահմանված կանոնից:

<u>Նպատակները, որի համար կարող է օգտագործվել վարկը (կարող է օգտագործվել միայն մեկ նպատակով)</u>. 3-6 կետերով սահմանված նպատակների համար սահմանվում են աջակցության նվազագույն սահմանաչափեր:

1. տնտեսավարողի աշխատակիցներին աշխատավարձ կամ դրան հավասարեցված վճարումներ, բայց յուրաքանչյուր աշխատակցի դեպքում ոչ ավել, քան ամսական 500 000 ՀՀ դրամ գումարի չափով՝ առավելագույնը երեք ամսվա համար.
2. պետական կամ համայնքի բյուջե հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների վճարումներ՝ առավելագույնը երեք ամսվա համար,
3. հումքի գնում կամ ներմուծում, պայմանով, որ հումքի ողջ ծավալը պետք է օգտագործվի Հայաստանի Հանրապետությունում՝ պատրաստի արտադրանք ստանալու նպատակով և տնտեսավարողը տնօրինում է անհրաժեշտ և համապատասխան արտադրական հզորություններ:
4. նոր սարքերի և սարքավորումների գնում կամ ներմուծում, պայմանով, որ տվյալ սարքերը և սարքավորումները պետք է օգտագործվեն Հայաստանի Հանրապետությունում արտադրություն կազմակերպելու կամ արտադրությունն ընդլայնելու նպատակով:
5. հանրային ծառայությունների վճարումներ, բայց յուրաքանչյուր ծառայության դեպքում ոչ ավել, քան ամսական 5 000 000 ՀՀ դրամ գումարի չափով՝ առավելագույնը երեք ամսվա համար:
6. ձեռնարկատիրությամբ զբաղվող տնտեսավարողների կողմից սննդի և դեղերի ներմուծում, պայմանով, որ ներմուծված ապրանքը պետք է իրացվի Հայաստանում:

<u>Աջակցության ստացումը ենթադրում է հետևյալ քայլերը.</u>

Ծրագրով վարկ տրամադրող ֆինանսական կազմակերպությունները պայմանագրեր են կնքելու ՀՀ Կենտրոնական բանկի հետ:

Նախահաստատում.

Օժանդակություն ստանալու համար անհրաժեշտ է հայտ ներկայացնել պայմանագիր կնքած ֆինանսական կազմակերպություններին՝ ներկայացնելով սահմանված նպատակով գումարի օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն (պարտավորությունների գծով տեղեկություններ, հումքի վերաբերյալ կնքված պայմանագրեր և այլն): Ֆինանսական կազմակերպությունները իրականացնում են հայտ ներկայացրած անձի նախահաստատում:

Հաստատում Կառավարության լիազորված անձի կողմից.

Նախահաստատում ներկայացրած անձանց ցանկը ներկայացվում է ՀՀ ԿԲ հիմնարկ՝ Գերմանահայկական հիմնադրամ ԾԿԳ, որը ստուգում է հայտերի համապատասխանությունը միջոցառման պահանջներին: Հայտերը քննարկվում են ըստ ներկայացման հերթականության և բավարարման դեպքում գումարի հատկացումը տեղի է ունենում փոքրից մեծ սկզբունքով, օրական առավելագույնը 1 մլրդ ՀՀ դրամ հատկացման սկզբունքով:

2-րդ միջոցառում

Միջոցառումը շահառու են այն անձինք, ովքեր բավարարում են հետևյալ վավերապայմաններին.

1. *ՀՀ տարածքում գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատերը,*
2. *որը ունի բարվոք վարկային և հարկային (իրավաբանական անձանց դեպքում) պատմություն,*

Օժանդակությունը կարող է տրամադրվել հետևյալ ձևերով. (յուրաքանչյուր դեպքում կիրառելի է միայն մեկը)[3].

- ✓ **Համաֆինանսավորում** մայր գումարի որոշակի չափով, վարկի նույն ժամկետով, համաֆինանսավորման մասի 0% տոկոսադրույքով, վարկի մայր գումարի վերադարձի մասով՝ մասնակի ռիսկի ստանձնմամբ,
  Լուծումը հետապնդում է հետևյալ նպատակները՝ վարկի գծով տնտեսավարողի մոտ ապահովման միջոցի ոչ բավարար մակարդակի, արժութային ռիսկի մասնակի չեզոքացման, ինչպես նաև տոկոսների գծով ծախսերի մասնակի նվազեցման խնդիրները.
- ✓ **Սուբսիդավորում** տվյալ վարկի (լիզինգի) տոկոսների չափով, առանց վարկի վերադարձի ռիսկի ստանձնման:
  Լուծումը հետապնդում է հետևյալ նպատակները՝ վարկի/լիզինգի գծով տնտեսավարողի մոտ տոկոսային ծախսերի էական նվազեցման խնդիրը:

Միջոցառման մասին որոշմամբ (որը կարելի է գտնել այստեղ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140673) սահմանված են այն նպատակները որի համար կարող է ստացվել վարկը, ըստ նպատակի դրա հիմնական պայմանները, տոկոսադրույքը:

Աջակցության ստացումը ենթադրում է հետևյալ քայլերը.

Նախահաստատում

Օժանդակություն ստանալու համար անհրաժեշտ է հայտ ներկայացնել պայմանագիր կնքած ֆինանսական կազմակերպություններին՝ ներկայացնելով սահմանված նպատակով գումարի օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն: Ֆինանսական կազմակերպությունները իրականացնում են հայտ ներկայացրած անձի նախահաստատում:

Հաստատում Կառավարության լիազորված անձի կողմից.

Նախահաստատում ներկայացրած անձանց ցանկը ներկայացվում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ ՊՀ Գյուղական ֆինանսավորման կառույցին

ՀՀ ԿԲ հիմնարկ՝ Գերմանահայկական հիմնադրամ ԾԿԳ, որը ստուգում է հայտերի համապատասխանությունը միջոցառման պահանջներին: Հայտերը քննարկվում են ըստ ներկայացման հերթականության և բավարարման դեպքում գումարի հատկացումը տեղի է ունենում փոքրից մեծ սկզբունքով, օրական առավելագույնը 1 մլրդ ՀՀ դրամ հատկացման սկզբունքով: 15 մլն ՀՀ դրամը գերազանցող չափով պետության համաֆինանսավորման վերաբերյալ դրական եզրակացություն տրվում է ՀՀ Կառավարության որոշմամբ:

[3]Գործում են պետական օժանդակության ծրագրերի միաժամանակյա կիրառության սահմանափակումներ:

3-րդ միջոցառում

Միջոցառումը շահառու են այն անձինք, ովքեր բավարարում են հետևյալ վավերապայմաններին.

1. հիմնական գործունեություն է ծավալում ստորև թվարկված ոլորտներից որևէ մեկում.
   a. մշակող արդյունաբերություն,
   b. կացության և հանրային սննդի կազմակերպում,
   c. փոխադրումներ և պահեստային տնտեսություն,
   d. զբոսաշրջային ծառայություններ,
   e. սպասարկման այլ ծառայություններ,
   f. առողջապահություն .
   g. 2019 թ. շրջանառությունը կազմել է նվազագույնը 24 մլն դրամ առավելագույնը՝ 500 մլն դրամ.
   h. 2019 թվականի յուրաքանչյուր եռամսյակի շրջանառությունը պակաս չի եղել տարեկան շրջանառության գումարի 10%-ից.
2. ունի բարվոք վարկային և հարկային պատմություն,
3. ըստ ԱՔՐԱ տեղեկատվության ժամանակին է կատարել իր վարկային պարտավորությունները:

Միջոցառման նպատակով տրամադրվող վարկերը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

- ✓ արժույթը՝ ՀՀ դրամ,
- ✓ ժամկետը՝ 36 ամիս, առաջին 6 ամսում վարկի մարում չի նախատեսվում,30 ամսվա ընթացքում մարումները պետք է իրականացվեն հավասարաչափ (որոշ բացառություններով): Տնտեսվարողն իրավունք ունի իրականացնել վաղաժամկետ մարում:
- ✓ մեկ տնտեսավարող սուբյեկտի վարկի առավելագույն չափը՝ 50 մլն ՀՀ դրամ բայց ոչ ավել, քան տնտեսվարող սուբյեկտի 2019թ. շրջանառության 10%-ը
- ✓ վարկային միջոցների օգտագործման կարգը՝ միայն անկանխիկ և բանկային փոխանցումով՝ ծախսերի նպատակայնությունը հաստատելուց հետո, վարկի հաստատմանը հաջորդող երեք ամիսների ընթացքում:
- ✓ **Տոկոսները կկազմեն առաջին և երկրորդ տարիներում զրո տոկոս, երրորդ տարում՝ 12 %:**
- ✓ Պահանջվելու է սեփականատիրոջ կամ կազմակերպության կառավարմանը մասնակցող այլ ֆիզիկական անձի անձնական երաշխավորություն:

Նպատակները, որի համար կարող է օգտագործվել վարկը,

1. աշխատակիցներին աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ, բայց յուրաքանչյուր աշխատակցի դեպքում ոչ ավել, քան ամսական 300 հազ դրամ գումարի չափով՝ առավելագույնը երեք ամսվա համար.
2. պետական կամ համայնքի բյուջե հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների վճարումներ (այսուհետ՝ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների վարկեր)՝ առավելագույնը երեք ամսվա համար,
3. հումքի գնում և ներմուծում, պայմանով, որ հումքը պետք է օգտագործվի Հայաստանում՝ նույն տնտեսվարողի արտադրական նպատակներով: Օգտագործման նպատակայնության նկատմամբ հսկողությունը իրականացնում է Ներդրումների աջակցման կենտրոնը.

4. հանրային ծառայությունների վճարումներ (էլեկտրաէներգիայի, ջրի, գազի, կապի և հեռահաղորդակցության գծով ծախսերի իրականացում)՝ առավելագույնը երեք ամսվա համար,
5. վարձակալական վճարներ:

<u>Աջակցության ստացումը ենթադրում է հետևյալ քայլերը.</u>

- ✓ <u>Դիմում է ներկայացվում</u> Ներդրումների աջակցման կենտրոն, որի հետ մեկտեղ ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը.
  - Շահառուի անվանունը, ՀՎՀՀ-ն,
  - Կոնտակտային տվյալներ,
  - Գործունեության հակիրճ նկարագրությունը,
  - Գործունեության ոլորտը /ըստ տնտեսական դասակարգիչի/
  - Լիազորագիր՝ ԱՔՌԱ-ի միջոցով տեեկատվություն ստանալու համար կամ ԱՔՌԱ-ից տեղեկանք:
  - 2019 թվականի կազմակերպության շրջանառությունը ըստ եռամսյակների համաձայն ՊԵԿ-ին տրամադրված հաշվետվությունների: Եթե կազմակերպությունը գործում է ընդհանուր հարկային դաշտում, ներկայացվում է Ձև 240 և Ձև 203: Եթե կազմակերպությունը գործում է շրջանառության հարկի դաշտում՝ ձև 232: Հաշվետվությունները ներբեռնվում են ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման համակարգից:
  - հայցվող վարկի չափը և դրա մարման ժամկետը /ամիսներով/;
  - հայտ, համաձայն հաստատված ձևի:
- ✓ Երկու աշխատանքային օրում դիմորդը տեղկացվում է թերությունների կամ մերժման հիմքերի առկայության վերաբերյալ: Այնուհետև իրականցվում է ՊԵԿ-ի միջոցով հարկային բարվոք պատմության ստուգման իրականացում երկու աշխատանքային օրվա ընթացքում:
- ✓ Դրական պատասխանի ստացման դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում կայացվում է արտոնյալ վարկավորումը հաստատելու մասին որոշում:
- ✓ Որոշման ստացումից հետո Շահառուն ՆԱԿ-ին տեղեկացնում է այն ֆինանսական կազմակերպության մասին, որի միջոցով ցանկանում է իրականացնել վարկի սպասարկումը:
- ✓ Ֆինանսական կազմակերպության ընտրությունից և երաշխավորության պայմանագրերի ստորագրումից հետո, ֆինանսական կազմակերպությունը կնքում է վարկային պայմանագիր: Այս փուլում պետք է ներկայացվի երաշխավորի ԱՔՌԱ համակարգից ստացված սպառողական վարկային զեկույց ամբողջական տեղեկանքը:
- ✓ Ֆինանսական կազմակերպության ընտրության վերաբերյալ հաստատումից հետո, ՆԱԿ-ին ներկայացվում է հետևյալ փաստաթղթերը.
  - Վարկ ստանալը վերաբերյալ հայտը, գործունեության հասցեն,
  - Շահառուի կանոնադրությունը, քաղվածքը,
  - Սեփականատերերի ցանկը,
  - Վարկ ստանալու վերաբերյալ իրավասու անձի որոշումը,
  - ԱՔՌԱ Վարկային տեղեկանքը,
  - Փոխկապակցված անձանց առկայության մասին տեղեկանք,
  - Էլ հասցե և հեռախոսահամար:

5-րդ միջոցառում

Միջոցառումը շահառու են այն անձինք, ովքեր բավարարում են հետևյալ վավերապայմաններին.

1. Տնտեսվարողները[4], որոնք 01.01.2020 թվականից մինչև 01.04.2020 թվականն ընկած ժամանակահատվածում անընդհատ ունեցել են 2-ից մինչև 50 վարձու աշխատակից և նշված ընկերությունների վճարված աշխատավարձի փաստացի ֆոնդը չի նվազել նշված ժամանակահատվածում: Ընդ որում, տնտեսավարողների աշխատակիցների քանակի և աշխատավարձի ֆոնդի հաշվարկներում չեն ներառվում 26.03.2020 թվականից մինչև 01.04.2020 թվականն ընկած ժամանակահատվածում ավելացված աշխատողների քանակը, ավելացված աշխատավարձային ֆոնդը:

Շահառուներին տրամադրվում է միանվագ դրամաշնորհ, որը հաշվարկվում է հետևյալ կարգով՝

ԱՉ=(ԱՀ:ԱՔ)*(ԱՔ:5)

որտեղ՝

ԱՉ – պետության կողմից տրամադրվող **աջակցության չափն է**

ԱՀ – կազմակերպության բոլոր աշխատողների **աշխատավարձերի հանրագումարն է**

ԱՔ – կազմակերպության **աշխատողների քանակն է**

Ընդ որում (ԱՔ:5) բանաձևը կլորացվում է դեպի ներքև:

Բանաձևը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

1. մինչև 5 աշխատակից ունեցող տնտեսավարողների պարագայում տնտեսավարողին տրամադրվող աջակցության չափը որոշելու համար մեկ ամսվա աշխատավարձի ֆոնդը բաժանվում է աշխատակիցների թվին.
2. 5 և ավելի աշխատակից ունեցող տնտեսավարողների պարագայում տնտեսավարողին տրամադրվող աջակցության չափը որոշելու համար՝
3. հաշվարկվում է ընկերության ամսական միջին աշխատավարձի չափը, այսինքն՝ մեկ ամսվա աշխատավարձի ֆոնդը բաժանած աշխատակիցների թվին,
4. հաշվարկվում է աշխատակիցների ընդհանուր թվի մեկ հինգերորդ մասը, այսինքն՝ աշխատակիցների ընդհանուր թիվը բաժանվում է 5-ի՝ կլորացումով դեպի ներքև
5. հաշվարկվում է սույն ենթակետի «ա» և «բ» պարբերությունների արդյունքների արտադրյալը:

Դրամաշնորհը հաշվարկվում է հետևյալ կարգով.

- ✓ 2020 թվականի ապրիլի 1-ից սկսած տնտեսավարողների կողմից օրենքով սահմանված կարգով 2020 թվականի մարտ ամսվա համար եկամտային հարկի հաշվարկ ներկայացնելուն պես, տնտեսավարողը ՀՀ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգից իր անձնական էջին ստանում է ծանուցում՝ Միջոցառման շահառու հանդիսանալու վերաբերյալ.

[4] բացառությամբ՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատների և ապահովագրական ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետեր, արժեթղթերի առք ու վաճառքով զբաղվող կազմակերպություններ, ներդրումային կազմակերպություններ, ներդրումային ֆոնդեր, վիճակախաղերի և շահումով խաղերի կազմակերպիչներ և այլ նմանատիպ գործունեություն ծավալողները

- ✓ ՀՀ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգից իր անձնական էջին Միջոցառման շահառու հանդիսանալու վերաբերյալ ծանուցում ստանալուց հետո, տնտեսավարողը ՀՀ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում տեղադրված ձևանմուշով էլեկտրոնային եղանակով ներկայացնում է դիմում՝ միանվագ դրամաշնորհ ստանալու համար:
- ✓ ՀՀ ՊԵԿ կողմից դիմումներն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ստուգվում են միջոցառման շահառուների ցանկում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանելու հիմքերը, կատարվում է միանվագ դրամաշնորհի մեծության հաշվարկ, կազմվում է վճարման հանձնարարական և ներկայացվում է գանձապետարան: